



**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական
համալսարան

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Երևան
«Լինգվա» հրատարակչություն
2016

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Ե 813

Հաստատված է Վ.Բրյուսովի անվան ԵՊԼՀ գիտխորհրդի կողմից

Կազմեցին՝ Յ.Ա.Ակոպյան, Բ.Հ.Մարգարյան, Ռ.Խ.Խաչատրյան
Խմբագիր՝ Գ.Ռ.Գասպարյան

Ե 813 Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ուսանողի ուղեցույց/ ԵՊԼՀ: Կազմ.՝ Յ.Ա.Ակոպյան, Բ.Հ. Մարգարյան, Ռ.Խ.Խաչատրյան. -Եր.: «Լինգվա» հրատ., 2016. - 45 էջ:

Սույն ուղեցույցի նպատակն է ԵՊԼՀ ուսանողներին ծանոթացնել բուհի պատմությանը, կառուցվածքին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը և ներհամալսարանական որոշ կառույցներին և դրանց գործունեությանը:

Ուղեցույցում ներկայացված են նաև ուսումնառության՝ դասախոսություններ, սեմինարներ, գործնական պարապմունքներ, խորհրդատվություններ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ, միջանկյալ և ամփոփիչ ստուգումներ, մեթոդաբանությունը, քննություններին ու ստուգաբանություններին պատրաստվելու յուրահատկությունները, ինքնուրույն աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-56-134-9

© «Լինգվա» հրատարակչություն, 2016
© Կազմողներ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՊԼՀ ՌԵԿՏՈՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	5
ԵՊԼՀ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	6
ՄԱՍ I ԵՊԼՀ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	8
ԵՊԼՀ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	8
ԵՊԼՀ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ.....	9
ԵՊԼՀ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ.....	15
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	17
ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ.....	18
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ	19
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ	20
ՄԱՍ II ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ	21
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	21
ՖԻԶԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԳԻՍՏ	22
ԲՈՒԺՄՊԱՍԱՐԿՈՒՄ	23
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՄՄ	23
ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒՅԿ.....	24
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ	24
ՄԱՍ III ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	25
ԺԱՄԱՏԱԽՏԱԿ.....	25
ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	25
ՄԵՄԻՆԱՐ.....	25
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ	26
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ	26

ԿՈՒՐՍՈՅԻՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ.....	26
ՊՐԱԿՏԻԿԱ	27
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ	27
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ	29
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՇԱՅԻՆ, ԹՎԱՅԻՆ ԵՎ ՏԱՌԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ.....	29
ՄԱՍ IV ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	30
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	30
ԵՊԼՀ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ	31
ԵՊԼՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	35

ԵՊԼՀ ՌԵԿՏՈՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Միրելի՛ ուսանողներ,

Ձեր առաջադիմության, կրթական բարձր պատրաստվածության շնորհիվ կարողացել եք իրավունք վաստակել սովորելու Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Մեր համալսարանն արդեն 80 տարվա արգասավոր ուղի է անցել: Այն այսօր Հայաստանի և աշխարհի առաջատար համալսարանների



կողքին լուրջ մրցակից է և գործընկեր: ԵՊԼՀ-ի որդեգրած քաղաքականության համաձայն՝ բուն զրավականը ուսանողների հաջողությունն է: Պահպանելով ուսանողակենտրոն համալսարանի համբավը՝ ջանում ենք հավատարիմ մնալ մեր առաքելությանը և հնարավորինս իրագործել մեր ռազմավարական ծրագիրը: Մեր գործընկեր համալսարանների հետ համագործակցելով՝ կազմակերպում ենք փոխանակման բազմաթիվ ծրագրեր, սեմինարներ, գիտաժողովներ: Լինելով կրթական բարեփոխումների ոլորտում առաջատար համալսարաններից մեկը՝ փորձում ենք բարձրացնել և արժևորել բարձրագույն կրթության դերը հանրային կյանքում:

Բարի՛ գալուստ և բարի՛ երթ՝ ձեզ:

Գայանե Գասպարյան

ԵՊԼՀ ռեկտոր, բան. գիտ. դոկտոր., պրոֆեսոր

ԵՊԼՀ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի 80-ամյա պատմությունը սկիզբ է առել 1935 թվականի փետրվարի 4-ին: Այդ օրը Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմը որոշում է կայացնում փետրվարի 15-ից Երևանում հիմնել երկամյա մանկավարժական ինստիտուտ՝ ռուսաց լեզվի ուսուցիչներ պատրաստելու նպատակով: Առաջին տնօրեն է նշանակվում Մ. Շեռլկովան:

Հինգ տարի անց՝ 1940 թվականին, որոշվում է վերակազմել երկամյա ինստիտուտը և այն վերածել պետական մանկավարժական ինստիտուտի: 1941թ. փետրվարին դպրոցներն օտար լեզվի մասնագետներով ապահովելու նպատակով ինստիտուտում բացվում է օտար լեզուների (գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն) երկամյա կուրսեր: Հայրենական մեծ պատերազմից հետո, ինչպես ողջ երկրում, այնպես էլ մեր հանրապետությունում առաջնային նշանակություն է ստանում օտար լեզուներին տիրապետող մասնագետների պատրաստման հարցը: 1948թ. մարտի 1-ին որոշվում է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետի հիմքի վրա բացել Օտար լեզուների մանկավարժական ինստիտուտ: Տնօրեն է նշանակվում Ա. Իսահակյանը:

1961թ. հոկտեմբերի 3-ին ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է կայացնում. «Հանրապետության հանրակրթական դպրոցներում ռուսաց և օտար լեզուների ուսուցիչների աճող պահանջարկը բավարարելու նպատակով 1962թ. հունվարից Երևանի պետական համալսարանի ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի հիմքի վրա ստեղծել «Ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտ»: 1962թ. մարտի 2-ին ինստիտուտը անվանվում է «Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ»:

1980-ական թվականներին ինստիտուտը լայն ճանաչում ուներ ոչ միայն հանրապետությունում, այլև ողջ Խորհրդային Միության մեջ: Հայաստանի դպրոցներում ռուսաց և օտար լեզուներ դասավանդող ուսուցչական արհեստավարժ կադրերի պատրաստումը, ինստիտուտի ամբիոններում գիտահետազոտական աշխատանքների տարեցտարի ընդլայնվող ծավալը, միութենական մասշտաբով իրականացվող «Բրյուսովյան ընթերցումները», գիտահետազոտական աշխատանքները, ակտիվ համագործակցությունը ոչ միայն ԽՍՀՄ հանրապետությունների, այլև արտասահմանյան երկրների մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ նկատելիորեն մեծացրին բուհի

հեղինակությունը՝ հաստատուն և ծանրակշիռ դարձնելով նրա տեղն ու դերը հանրապետության ուսումնագիտական կյանքում:

1985թ. մայիսի 14-ին որակյալ կադրերի պատրաստման և գիտության զարգացման համար ինստիտուտը պարզևատրվում է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

1995թ. մարտի 17-ին ինստիտուտը վերանվանվում է Հայաստանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական համալսարան, իսկ 5 տարի անց ՀՀ կառավարության 2000թ. որոշմամբ՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան:

1990-ական թվականների կեսերից մինչ օրս հետևողական աշխատանք է տարվել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի չափորոշիչների, ուսումնական գործընթացի բարելավման հետ կապված չափանիշների և կանոնակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Համալսարանում գործում է նաև կրթական երրորդ աստիճանը՝ ասպիրանտական եռամյա կրթություն: Ուսումնառությունն ավարտվում է ասպիրանտի կոդմից ատենախոսության պաշտպանությամբ և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմամբ:

2013թ. Խորհրդի նիստում ընդունվեց ԵՊՀՀ 2013-2017թթ. ռազմավարական ծրագիրը:

2014թ. ապրիլի 30-ի ՀՀ կառավարության որոշմամբ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը վերանվանվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան:

2015թ. ապրիլի 11-ին ԵՊՀՀ-ն 4 տարի ժամկետով ստացել է ինստիտուցիոնալ պետական հավատարմագրում:

Իր գործունեության ընթացքում համալսարանը պատրաստել է լեզվաբանության, մանկավարժության, բանասիրության, քաղաքագիտության, երկրագիտության, միջազգային լրագրության, միջազգային տուրիզմի, հոգեբանության, թարգմանչական գործի /երկլեզու և եռլեզու/, սերվիսի, հանրային կառավարման, եվրոպագիտության, տեղեկատվության և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաների /PR/, միջազգային հարաբերությունների ոլորտների մասնագետներ:

2012թ.-ից ԵՊՀՀ ռեկտորն է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գայանե Գասպարյանը:

ՄԱՍ I
ԵՊԼՀ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊԼՀ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը պետական ոչ առևտրային կազմակերպություն է /ՊՈԱԿ/: Այն կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է: ԵՊԼՀ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

ԵՊԼՀ կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ԵՊԼՀ կանոնադրությանը համապատասխան:

ԵՊԼՀ կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ: ԵՊԼՀ բարձրագույն կառավարման մարմինը ԵՊԼՀ խորհուրդն է, որը բաղկացած է 24 անդամներից: 2015թ.-ից ԵՊԼՀ խորհրդի նախագահն է ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու Հովհաննես Հովսեփյանը:

ԵՊԼՀ գիտական խորհուրդը լուծում է ԵՊԼՀ ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հարցերը: Այն բաղկացած է 54 անդամներից: Գիտական խորհրդի նախագահն է ԵՊԼՀ ռեկտորը:

Ռեկտոր				
Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր	Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր	Ֆինանսատնտեսական հարցերով պրոռեկտոր	Ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր	Ռեկտորի գլխավոր խորհրդական Վարչակազմակերպչական հարցերով ռեկտորի օգնական

ԵՊԼՀ վարչական կազմը /ռեկտոր, պրոռեկտորներ, ռեկտորի գլխավոր խորհրդական, վարչակազմակերպչական հարցերի գծով ռեկտորի օգնական/ գտնվում է ԵՊԼՀ կենտրոնական մասնաշենքում՝ Թումանյան 42 հասցեում:

ԵՊԼՀ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանն ունի 4 ֆակուլտետ, որոնք տեղակայված են Թումանյան 42 հասցում գտնվող ԵՊԼՀ մասնաշենքերում: Ֆակուլտետի ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, ուսումնամեթոդական գործունեությունը ղեկավարում է ֆակուլտետի ղեկանը: Ֆակուլտետի ղեկանը իրականացնում է հետևյալ գործառույթները.

- ✓ ներկայացնում է ֆակուլտետը ԵՊԼՀ այլ ստորաբաժանումների, հանրապետական և միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում.
- ✓ ապահովում է ԵՊԼՀ խորհրդի, գիտական խորհրդի, ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.
- ✓ սահմանված կարգի համաձայն՝ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ղեկանի տեղակալների, ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները և խորհրդի անդամների կազմը.
- ✓ սահմանված կարգով համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կարգապահական տույժի ենթարկելու, հեռացնելու, վերականգնելու, ակադեմիական արձակուրդ ձևակերպելու, ինչպես նաև ֆակուլտետից ֆակուլտետ ուսանողների ակադեմիական շարժունության վերաբերյալ.
- ✓ կազմակերպում և հսկում է ուսումնական գործընթացը.
- ✓ կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակները և հետևում դրանց կատարմանը.
- ✓ սահմանված կարգով կազմակերպում և հսկում է միջանկյալ և ամփոփիչ քննությունների անցկացման գործընթացը.
- ✓ իրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում (բացառությամբ համալսարանից հեռացնելու) ուսանողներին.
- ✓ կազմակերպում և անցկացնում է միջամբիոնային խորհրդակցություններ, գիտական և գիտամեթոդական խորհրդակցություններ և սեմինարներ.
- ✓ իրականացնում է ֆակուլտետի կանոնակարգից բխող և ֆակուլտետի ուսումնադաստիարակչական, ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված գործընթացներ:

Ֆակուլտետի կառուցվածքային հիմնական միավորը ամբիոնն է: Ամբիոնի ղեկավարումը իրականացնում է ամբիոնի վարիչը: Ամբիոնի վարիչը իրականացնում է հետևյալ գործառույթները.

- ✓ հաշվետու է ամբիոնին, ֆակուլտետի խորհրդին, համալսարանի գիտխորհրդին.
- ✓ մասնակցում է ամբիոնի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը.
- ✓ վարում է ամբիոնի նիստերը.
- ✓ ի պաշտոնե գիտխորհրդի, ֆակուլտետի խորհրդի անդամ է.
- ✓ իրականացնում է ամբիոնի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունների և ամբիոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկում դրանց կատարման ժամկետներն ու որակը.
- ✓ ղեկավարում է ամբիոնի ուսումնադաստիարակչական և գիտամեթոդական աշխատանքները, վերահսկում է առարկայական ծրագրերի մշակումը և մասնակցում է մասնագիտությունների /մասնագիտացումների/ ներդրման գործընթացներին.
- ✓ իրականացնում է ամբիոնի դասախոսների դասալսումներ և կազմակերպում դրանց քննարկում.
- ✓ ամբիոնի նիստին է ներկայացնում առաջարկություններ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնատեղերի տեղակալման, պաշտոններում առաջընթացի, հատուկ տարակարգեր զբաղեցնելու և աշխատանքային պայմանագրերը կնքելու և վերակնքելու պայմանների վերաբերյալ.
- ✓ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին է ներկայացնում առաջարկություններ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում փոփոխություններ անելու, նոր պաշտոնատեղերի ստեղծման և արտամիջոցային կարգով պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնի համալրման մասին.
- ✓ ուսումնական մաս է ներկայացնում ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանը և դրա վերաբերյալ ներկայացնում տարեկան հաշվետվություն.
- ✓ ապահովում է գիտամանկավարժական կադրերի պատրաստման, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման, մագիստրանտների, ասպիրանտների, դոկտորանտների ուսումնագիտական գործունեության որակը.
- ✓ պատասխանատվություն է կրում ամբիոնի ներքին կարգուկանոնի և աշխատանքի կազմակերպման կանոնների պահպանման համար.
- ✓ միջնորդություն է ներկայացնում ֆակուլտետի ղեկանին ամբիոնի աշխատակիցների պարգևատրման և խրախուսման, ինչպես նաև աշխատակիցներին կարգապահական տույժի ենթարկելու համար:

Համառոտ ներկայացնում ենք ԵՊՀ ֆակուլտետները՝ ըստ այբբենական կարգի:

Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետ

ԵՊՀ-ում 2004թ.-ին ստեղծվեց Լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետը: 2013թ.-ին ֆակուլտետը վերանվանվեց Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետ:

Ֆակուլտետի կրթական ծրագրերը

Բակալավրիատ

Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն

Միջազգային լրագրություն

Միջազգային տուրիզմ

Հոգեբանություն

Երկրագիտություն

Թարգմանչական գործ

Անգլերեն-հայերեն

Գերմաներեն-հայերեն

Ֆրանսերեն-հայերեն

Իտալերեն-հայերեն

Իսպաներեն-հայերեն

Չինարեն-հայերեն

Կորեերեն-հայերեն

Ռուսերեն-անգլերեն-հայերեն

Լրագրություն

Միջազգային լրագրություն

Մերվիս

Միջազգային տուրիզմ

Մագիստրատուրա

Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն

Միջազգային տուրիզմ

Լրագրություն

Միջազգային լրագրություն

Մերվիս

Միջազգային տուրիզմ

Թարգմանչական գործ

Անգլերեն-հայերեն

Գերմաներեն-հայերեն

Ֆրանսերեն-հայերեն

Ռուսերեն-անգլերեն-հայերեն
Ֆակուլտետում գործող ամբիոնները
Փիլիսոփայության
Եվրոպական և ասիական լեզուների
Հայագիտության
Անգլերենի հաղորդակցման և թարգմանության

Ֆակուլտետում գործող գիտատեսուժական կենտրոնները
Միջազգային լրագրության
Միջազգային տուրիզմի
Հեռ.՝ /37410/ 53-20-02 /ներ.՝ 2-30/, Էլ.փոստ՝ lingvo@brusov.am

Հեռակա ուսուցման ֆակուլտետ

Հեռակա ուսուցման ֆակուլտետը կազմավորվել է 2014թ.-ին:

Ֆակուլտետի կրթական ծրագրերը

Բակալավրիատ

Օտար լեզու և գրականություն

Մանկավարժություն

Ռուսաց լեզու և գրականություն

Մանկավարժություն

Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն

Միջազգային տուրիզմ

Միջազգային լրագրություն

Լեզվաբանություն

Անգլերեն

Ֆրանսերեն

Գերմաներեն

Իտալերեն

Լրագրություն

Միջազգային լրագրություն

Մերվիս

Միջազգային տուրիզմ

Մագիստրատուրա

Օտար լեզու և գրականություն

Մանկավարժություն

Լրագրություն

Միջազգային լրագրություն

Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն

Միջազգային տուրիզմ
Տեղեկատվություն և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ /PR/
Լեզվաբանություն
Լեզվաբանություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ
Հանրային կառավարում
Կրթության կառավարում և պլանավորում
Ռուսաց լեզու և գրականություն
Մանկավարժություն
Հեռ.՝ /37410/ 53-22-39 /ներ.՝ 2-18/ , Էլ.փոստ՝ heraka@brusov.am

**Ռուսաց և օտար լեզուների և միջազգային
հաղորդակցությունների ֆակուլտետ**

ԵՊԱՀ հնագույն ֆակուլտետն է: Տարբեր ժամանակներում այն կրել է տարբեր անվանումներ /Ռուսաց լեզվի և գրականության, Ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների/: 2014թ.-ից ֆակուլտետը կոչվում է Ռուսաց և օտար լեզուների և միջազգային հաղորդակցությունների ֆակուլտետ:

Ֆակուլտետի կրթական ծրագրերը

Բակալավրիատ

Լեզվաբանություն

Ռուսաց լեզու

Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն

Քաղաքագիտություն

Երկրագիտություն

Ռուսաց լեզու և գրականություն

Բանասիրություն

Մանկավարժություն

Մագիստրատուրա

Ռուսաց լեզու և գրականություն

Բանասիրություն

Մանկավարժություն

Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն

Ռուսաց լեզու և միջմշակութային հաղորդակցություն

Տեղեկատվություն և հանրային հաղորդակցման տեխնոլոգիաներ /PR/

Քաղաքագիտություն

Միջազգային հարաբերություններ

Եվրոպագիտություն

Ֆակուլտետում գործող ամբիոնները

Ռուսաց և սլավոնական լեզվաբանության
Համաշխարհային գրականության և մշակույթի
ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և
եվրոպագիտության
Լեզվաբանության և հաղորդակցման տեսության
Անգլերենի հնչյունաբանության և քերականության

Ֆակուլտետում գործող գիտաուսումնական կենտրոնը

Հանրային հաղորդակցությունների և տեղեկատվության
Հեռ.՝ /37410/ 53-17-52 /ներ.՝ 2-27/, Էլ.փոստ՝ russian@brusov.am

Օտար լեզուների ֆակուլտետ

Օտար լեզուների ֆակուլտետը 2004 թ.-ին միավորված Օտար
լեզուների և ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետների
իրավահաջորդն է:

Ֆակուլտետի կրթական ծրագրեր

Բակալավրիատ

Լեզվաբանություն

Անգլերեն
Ֆրանսերեն
Գերմաներեն
Իտալերեն

Օտար լեզու և գրականություն

Մանկավարժություն
Բանասիրություն

Մագիստրատուրա

Լեզվաբանություն

Անգլերեն
Ֆրանսերեն
Գերմաներեն
Իտալերեն

Լեզվաբանություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ

Օտար լեզու և գրականություն

Մանկավարժություն
Բանասիրություն

Մանկավարժական հոգեբանություն
Մանկավարժություն՝ ֆրանսերեն լեզու /ֆրանսերենի դասավանդման
մեթոդաբանություն և կրթական նորագույն տեխնոլոգիաներ/
Հանրային կառավարում
Կրթության կառավարում

Ֆակուլտետում գործող ամբիոնները

Անգլերենի բառագիտության և ոճաբանության
Ֆրանսերենի
Գերմաներենի
Մանկավարժության և լեզուների դասավանդման
Կրթության կառավարման և պլանավորման
Ֆիզդաստիարակության և քաղաքաշտպանության
Հեռ.՝ /37410/ 53-31-31 /ներ.՝ 1-15/, Էլ.փոստ՝ foreign@brusov.am

ԵՊԼՀ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԵՊԼՀ գրադարանը ստեղծվել է 1935 թ.-ին:
Գրադարանում այսօր հաշվարկվում է շուրջ 200.000 միավոր
գրականություն:

Գրադարանի բաժինները

- ✓ Ընթերցասրահ
- ✓ Մշակման և համալրման բաժին
- ✓ Բաժնույթի բաժին և գրապահոց
- ✓ Էլեկտրոնային սպասարկման և տեղեկատվության բաժին
- ✓ Ավստրիական գրադարան

ԵՊԼՀ գրադարանը անդամակցում է Հայաստանի էլեկտրոնային
գրադարանների կոնսորցիումին (ՀՔԳԿ) (eLCA) www.elca.am և միացված է
թվային գրադարանների ցանցին, որը հնարավորություն է ընձեռում
օգտվել EBSCOhost, eLIBRARY, SpringerLink, Polpred.com և Օճօր CMI
էլեկտրոնակային շտեմարաններից: Տվյալ էլեկտրոնային շտեմարանների
աղբյուրները բաց մատչելիություն չունեն և դրանցից կարելի է օգտվել
միայն ԵՊԼՀ գրադարանի համակարգչային սրահից:

ԵՊԼՀ գրադարանի աշխատանքային ժամերն են 09:00-17:30,
ընդմիջումը՝ 13:00-13:30-ը: Ընթերցասրահի աշխատանքային ժամերն են
09:00-20:00-ը:

Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ գրադարանում առկա գրականությունը
հնարավոր է պատվիրել առցանց: Ծառայությունից կարող են օգտվել ԵՊԼՀ
ուսանողները, դասախոսները և աշխատակիցները:

Առցանց պատվերը գործում է 24 ժամ, սակայն գրադարանավարը Ձեր պատվերը ընդունում է աշխատանքային օրերին՝ առավոտյան ժամը 09:30-13:00: Առցանց պատվերը սպասարկվում է նույն օրը աշխատանքային ժամերի ընթացքում՝ 13:30-17:30:

ԵՊԼՀ ուսանողները, դասախոսները և աշխատակիցները կարող են նաև օգտվել «հարց գրադարանավարին» ծառայությունից, որը սպասարկվում է էլեկտրոնային փոստով՝ գրադարանի հետ կապված հարցերի դեպքում աջակցություն տրամադրելու համար: Գրադարանից օգտվելն անվճար է:

Գրադարանի ընթերցող դառնալու համար սպասարկման բաժին պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ✓ ուսանողական տոմս,
- ✓ 3x4 չափի լուսանկար:

ԵՊԼՀ գրադարանում գրանցված ընթերցողները կարող են վերցնել մինչև 12 գիրք: Գեղարվեստական գրականությունը տրվում է 10 օրով, իսկ ուսումնա-մեթոդական գրքերը կամ դասագրքերը՝ 1 կիսամյակ կամ 1 ուսումնական տարի ժամկետով: CD և DVD-ները տրվում են երկու օրով:

Հազվագյուտ, մեկ օրինակ գրականությունից, հանրագիտարաններից, չհրատարակված նյութերից, թեկնածուական և մագիստրոսական ատենախոսություններից կարելի է օգտվել միայն ընթերցասարահում: Ընթերցասարահից կարելի է վերցնել մինչև 3 գիրք և 5 պարբերական մամուլ:

Սպասարկման բաժնում պատվիրված գրականությունը տրամադրվում է երկու ժամվա ընթացքում:

Ընթերցողը պարտավոր է խնամքով վերաբերվել գրքերի և գույքի հետ: Արգելվում է գրքի մեջ նշում կատարել, էջ պոկել կամ ծալել: Գիրք ստանալիս թերություններ հայտնաբերելու դեպքում ընթերցողը պետք է այդ մասին հայտնի գրադարանավարին: Գիրքը կորցնելու կամ վնասելու դեպքում ընթերցողը պարտավոր է կամ փոխարինել այն նույնով կամ վճարել մինչև 500 դրամ արժողությամբ գրքի տասնապատիկը, 500 դրամից բարձր արժողությամբ գրքի հնգապատիկը:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ուսանողը պարտավոր է հանձնել իր մոտ եղած գրականությունը:

Հեռ.՝ /+37410/ 53-55-11 /նեք.՝ 2-12/, Էլ. փոստ՝ library@brusov.am

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը միջազգային ասպարեզում իր գործունեության հիմնական նպատակը համարում է միջազգային կրթության և գիտության բնագավառում հայկական կրթական համակարգի մասնակցության ապահովումը:

ԵՊՀ-ում գործում է միջազգային կապերի վարչություն, որն ապահովում է ԵՊՀ միջազգային գործունեության իրականացումը հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ✓ միջազգային ծրագրերի իրականացում, միջազգային ուսումնական և գիտական միջոցառումների կազմակերպում.
- ✓ միջազգային պայմանագրերի կնքում, առկա համագործակցության ընդլայնում.
- ✓ միջազգային չափանիշներին համապատասխան՝ ռազմավարական ծրագրի և աշխատանքային պլանների մշակում.
- ✓ միջազգային հարաբերությունների բնագավառին առնչվող վերլուծական աշխատանքների և միջազգային բենչմարքինգի իրականացում.
- ✓ միջազգային կրթական ծրագրերին պատշաճ մասնակցություն.
- ✓ ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի փոխանակում.
- ✓ ԵՊՀ արտասահմանցի ուսանողներին և դասախոսներին ուսումնական գործընթացների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև կացության կարգավիճակին առնչվող հարցերում աջակցություն:

ԵՊՀ-ն սերտ համագործակցում և համատեղ միջոցառումներ է իրականացնում հետևյալ միջազգային կառույցների հետ՝

- ✓ Եվրոպայի խորհրդի լեզվական քաղաքականության բաժին,
- ✓ Եվրոպայի խորհրդի ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն,
- ✓ Համալսարանների միջազգային ասոցիացիա,
- ✓ Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիա,
- ✓ Սնժովյան տարածաշրջանի համալսարանների ցանց,
- ✓ ԱՊՀ ցանցային համալսարան,
- ✓ Լեզվի հարցերով եվրոպական խորհուրդ,
- ✓ Կորեա միջազգային հիմնադրամ /KF/,
- ✓ Ակադեմիական փոխանակման գերմանական ծառայություն /DAAD/,
- ✓ Ավստրիական փոխանակման ծառայություն/OAD/,
- ✓ Կորեական միջազգային համագործակցության գործակալություն /KOICA/,

- ✓ Կոնֆուցիոսի ինստիտուտի գրասենյակ /HANBAN/,
- ✓ Հնդկական խորհուրդ մշակութային հարցերով /ICCR/,
- ✓ Վիշեգրադի միջազգային հիմնադրամ/IVF/:

ԵՊԼՀ-ն համագործակցում է եվրոպական և ասիական ավելի քան 50 համալսարանների հետ /<http://brusov.am/en/international-relations/international-cooperation/partner-universities/>՝ իրականացնելով 5 համատեղ ծրագիր Փարիզ-Մոսկովի համալսարանի և Ժողովուրդների բարեկամության ռուսական համալսարանի հետ: Ներկայումս ԵՊԼՀ-ն իրականացնում է Էրազմուս Մունդուս 2 և Էրազմուս+ 6 ծրագրեր:

Համալսարանում, ըստ անհրաժեշտության, դասավանդվում են 23-27 օտար լեզուներ:

Հեռ.՝ /37410/ 53-02-72 /սեք.՝ 1-24/, Էլ. փոստ՝ intrel@brusov.am,
intrel_officer@brusov.am

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Աշխատաշուկայում ԵՊԼՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության զարգացման, շրջանավարտների և համալսարանի միջև մշտական կապի ամրապնդման ու համագործակցության զարգացման նպատակով ԵՊԼՀ-ում գործում է Կարիերայի կենտրոն:

Կարիերայի կենտրոնի առաքելությունն է ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումը և արդի աշխատաշուկայում ճիշտ կողմնորոշման ուղղորդումը, ինչպես նաև շրջանավարտ-բուհ կապի հաստատումն ու ամրապնդումը: Հաշվի առնելով աշխատաշուկայում առկա նոր մարտահրավերները՝ կենտրոնը մշտապես կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ /ինտերնշիփ ծրագրեր, սեմինար-դասընթացներ, հանդիպումներ կենտրոնի գործընկերների հետ և այլն/՝ ի նպաստ ուսանողների և շրջանավարտների մրցունակության և տեղեկացվածության բարձրացման: Ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացման համար կենտրոնը իրականացնում է տարբեր ուսումնասիրություններ ուղղված աշխատաշուկայում մրցունակության ընթացիկ վիճակի և հիմնահարցերի վերաբերյալ:

Կարիերայի կենտրոնը համագործակցում է տեղական և միջազգային բազմաթիվ կազմակերպությունների հետ: Գործատուների հետ համագործակցության շրջանակներում կենտրոնը պարբերաբար կազմակերպում է աշխատանքային տոնավաճառներ:

Կարիերայի կենտրոնը ռեզյումեներ կազմելու, տարաբնույթ հարցազրույցների ընթացքում իրենց լավագույն կողմերով դրսևորելու

համար խորհրդատվություն է տրամադրում ուսանողներին և շրջանավարտներին:

Կենտրոնը իրականացնում է տեղական, ինչպես նաև միջազգային կամավորական և կրթական մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ Էրազմուս+ ծրագրի շրջանակում երիտասարդական փոխանակման ծրագրեր, վերապատրաստումներ, Եվրոպական կամավորական ծառայություն ծրագիրը, Կրեդիտային շարժունություն և այլն:

Կարիերայի կենտրոնը էլեկտրոնային հասցեների ու խմբերի, ինչպես նաև ԵՊԼՀ կայքի և սոցիալական ցանցերի միջոցով ազգային, տարածաշրջանային և միջազգային կրթական ծրագրերի, թափուր աշխատատեղերի, սեմինարների, կամավորական ծրագրերի և դասընթացների վերաբերյալ տեղեկատվություն է տարածում ուսանողների և շրջանավարտների շրջանում:

Հեռ.՝ /37410/ 53-02-72 /ներ.՝ 5-15/, Էլ. փոստ՝ carecentre@brusov.am

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ

ԵՊԼՀ շրջանավարտների միավորումը հիմնադրվել է 2007թ.-ին: Միավորման հիմնական նպատակն է ԵՊԼՀ շրջանավարտների և բուհի միջև ստեղծել սերտ կապեր և շարունակաբար ամրապնդել դրանք:

Միավորումն ունի աջակից և պատվավոր անդամներ: Միավորման անդամ կարող են դառնալ ԵՊԼՀ շրջանավարտները, համալսարանում աշխատող կամ առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ ունեցող ՀՀ քաղաքացիները, համալսարանին սատարելու ցանկություն ունեցող ՀՀ կամ օտարերկրյա քաղաքացիները, որոնք ցանկանում են մասնակցել նրա գործունեությանը: Աջակից անդամ կարող է լինել այն անձը, որը համալսարանի շրջանավարտ չէ, բայց ցանկանում է աջակցել և օգնություն ցույց համալսարանի կրթագիտական ծրագրերի իրականացմանը: Միավորման պատվավոր անդամ կարող է դառնալ այն անձը, որը ինտելեկտուալ, խորհրդատվական, բարոյական, նյութական կամ այլ օգնություն է ցուցաբերում միավորմանը:

ԵՊԼՀ շրջանավարտների միավորման նպատակներն են՝

- ✓ ամրապնդել բուհի և շրջանավարտների միջև շարունակական կապը.
- ✓ նպաստել ԵՊԼՀ-ում կրթական և գիտական ծրագրերի իրականացմանը.
- ✓ քննարկել ԵՊԼՀ շրջանավարտներին հուզող հարցերը.
- ✓ իրականացնել տեղեկատվության և փորձի փոխանակում ՀՀ և արտերկրի նմանատիպ գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ.

- ✓ քաջալերել շնորհալի երիտասարդներին և երիտասարդ մասնագետներին:

ԵՊԼՀ շրջանավարտների միավորման նախագահն է Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ, Արցախի հերոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր **Գերաշնորհ Տ. Պարզն արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:**

Հեռ.՝ /37410/ 53-02-72 /ներ.՝ 5-15/, Էլ. փոստ՝ alumnicentre@brusov.am

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՊԼՀ Որակի ապահովման կենտրոնը ստեղծվել է 2009 թվականին, ինչից հետո ԵՊԼՀ-ում սկիզբ առան որակի մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացները:

Որակի ապահովման կենտրոնն իր առաքելության շրջանակներում նպաստում է ամբիոնների, ֆակուլտետների, բուհի կրթական ծրագրերի, հետազոտական գործունեության և այլ ստորաբաժանումների որակի ներքին ապահովման գործընթացների կանոնակարգմանը տարբեր հայեցակարգերի ձևավորման, դրանց հիման վրա կանոնակարգերի ու ընթացակարգերի մշակման, ինչպես նաև որակի ապահովման և գնահատման տարբեր գործիքների, հետազոտությունների, հարակից ձևաթղթերի մշակման ու գործադրման միջոցով:

Կարևորելով արտաքին (գործատուների, շրջանավարտների, շահագրգիռ այլ անձանց ու հանրության) և ներքին (ուսանողների, դասախոսների, անձնակազմի) շահակիցների կարծիքը բուհի վերաբերյալ Որակի ապահովման կենտրոնը շարունակաբար իրականացնում է՝

- ✓ ուսանողների կարիքների վերհանման և բավարարվածության աստիճանի ուսումնասիրություն հարցումների միջոցով.
- ✓ շրջանավարտների և գործատուների կարծիքների ուսումնասիրություն ԵՊԼՀ մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ:

Կարիքների գնահատման արդյունքները ներկայացվում են բուհի ղեկավարությանն ու անձնակազմին բարելավման հետագա քայլեր պլանավորելու նպատակով:

Հեռ.՝ /37410/ 53-02-72 /ներ.՝ 2-17/, Էլ. փոստ՝ quality@brusov.am

ՄԱՍ II
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

ԵՊԼՀ ուսանողական խորհուրդը /ՈՒԽ/ հիմնադրվել է 1997թ. սեպտեմբերին: Ուսանողական խորհուրդը ուսանողական ինքնակառավարման և ներկայացուցչական կազմակերպություն է:

ՈՒԽ նպատակներն են՝

- ✓ պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, համալսարանի կառավարման համապատասխան մարմիններին ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր.
- ✓ մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը.
- ✓ իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին.
- ✓ նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը ու խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը.
- ✓ աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը և այլն:

Ուխ-ն ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը /ԵՊԼՀ կառավարման մարմիններում ուսանողները կազմում են 25%/:

Ուխորհրդի կառավարման մարմինները

- ✓ Ընդհանուր ժողով
- ✓ Նախագահություն
- ✓ Նախագահ

ԵՊԼՀ ՈՒԽ-ի կառավարման բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն է, որն ընտրվում է 2 տարի ժամկետով՝ ուսանողների մասնակի շրջափոխության սկզբունքով:

ԵՊԼՀ ՈՒԽ նախագահության անդամ են ի պաշտոնե Ուխ նախագահը, փոխնախագահը, քարտուղարը, ՈՒԳԸ նախագահը, ֆակուլտետային Ուխ նախագահները, ուսանողական թերթի խմբագիրը և մշտական հանձնաժողովների պատասխանատուները:

Ուսանողական խորհրդի նախագահը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից 2 տարի ժամկետով:

ՈՒԽ-ն ունի իր «Պոլիզլոտ» ուսանողական ամսագիրը, որը լուսաբանում է ՈՒԽ աշխատանքները և գործունեությունը և ԵՊԼՀ-ում կատարվող իրադարձությունները:

ՈՒԽ մշտական գործող ստորաբաժանումները

- ✓ Ֆակուլտետային ուսանողական խորհուրդներ
- ✓ Հանձնաժողովներ
- ✓ Ուսանողական գիտական ընկերություն
- ✓ Թերթի խմբագրություն

ՈՒԽ մշտական և ժամանակավոր ստորաբաժանումները

- ✓ Ուսումնական գործընթացի կազմակերպման հանձնաժողով
- ✓ Մշակութային հանձնաժողով
- ✓ Սպորտի հանձնաժողով
- ✓ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի հանձնաժողով
- ✓ Կազմակերպչական հանձնաժողով
- ✓ Բարեգործական հանձնաժողով
- ✓ Արտաքին կապերի հանձնաժողով

ՈՒԽ ակումբները

- ✓ «Պոլիզլոտ» Ինտելեկտուալ ակումբ
- ✓ Բանավեճի ակումբ
- ✓ Ժամանցի ակումբ
- ✓ Կինոգետների ակումբ
- ✓ Գրքամոլների ակումբ
- ✓ Թարգմանիչների ակումբ

2013թ.-ից ՈՒԽ-ին կից գործում է նաև ավագների խորհուրդը, որում ներգրավված են ԵՊԼՀ բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր խմբերի ավագները: Ամիսը մեկ անգամ կազմակերպվող հանդիպումների ժամանակ ավագները ԵՊԼՀ ռեկտորի խորհրդականին են ներկայացնում խմբերում առաջացած տարաբնույթ հարցերն ու խնդիրները, առաջարկում դրանց լուծման եղանակները: Այս հանդիպումների միջոցով նրանք ստանում են իրենց հուզող հարցերի պատասխանները: Ավագներին են ներկայացվում ԵՊԼՀ-ում ընդունված որոշումները, տրամադրվում է տեղեկատվություն ընթացիկ ծրագրերի և համալսարանական նորությունների վերաբերյալ:

Հեռ.՝ /37410/ 53-81-64 /ներ.՝ 1-07/, Էլ. փոստ՝ studcouncil@brusov.am

ՖԻԶԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԳԻՍ

Համալսարանում ուսումնական գործընթացից զատ իրականացվում են նաև սպորտային բազմաթիվ միջոցառումներ:

Ֆիզդաստիարակության ամբիոնում գործում են վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի, աթլետիկայի մարզական վարպետության կատարելագործման խմբեր, որոնց մարզումները կազմակերպվում են ամբիոնի մասնագետ-դասախոսների ուժերով: ԵՊԼՀ ներկայացուցիչները մասնակցել են հանրապետական և միջազգային բազմաթիվ մրցումների /ուսանողական խաղեր, համահայկական խաղեր և այլն/՝ արձանագրելով բազմաթիվ հաջողություններ:

Համալսարանում անցկացվում են տարբեր մարզաձևերից ներքին առաջնություններ:

Ուսումնական ծրագրին համապատասխան կազմակերպվում են նաև ճանաչողական երթարշավներ դեպի Հայաստանի պատմամշակութային տարբեր վայրեր:

Համալսարանի ուսանողները համապատասխան զեղչերով կարող են օգտվել Ծաղկաձոր քաղաքում գտնվող ԵՊԼՀ հանգստյան տնից: Արտասահմանցի ուսանողների համար գործում է ԵՊԼՀ հյուրատունը:

ԲՈՒԺՄՊԱՍԱՐԿՈՒՄ

ԵՊԼՀ ուսանողների համար տրամադրվում են բժշկական հետևյալ ծառայությունները՝

- ✓ վատառողջ ուսանողների ընդունելություն,
- ✓ բուժզննում և վատառողջ ուսանողների ստուգայց ուսանողական պոլիկլինիկա,
- ✓ շաբաթը մեկ անգամ սանհիգիենիկ աշխատանքների իրականացում,
- ✓ ամիսը մեկ անգամ դինամիկ հսկողության տակ գտնվող ուսանողների համայց,
- ✓ տարին երկու անգամ ուսանողների բուժզննում, հիվանդությունների հայտնաբերում և անհրաժեշտության դեպքում՝ ուղեգրում ուսանողական պոլիկլինիկա:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՄՍ

Ուսանողական տոմսը համարվում է ԵՊԼՀ-ում սովորողի /ուսանողի/ կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և ուսանողին տրամադրվում է անվճար:

Ուսանողական տոմսում նշվում է սովորողի ազգանունը, անունը, հայրանունը, ուսանողական տոմսի համարը, ուսուցման ձևը, ընդունվելու տարին, վավերականության ժամկետը: Ուսանողական տոմսը կորցնելու դեպքում սովորողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել դեկանատ: Կորցրած տոմսը վերականգնելու կամ վնասված տոմսը փոխարինելու

համար սովորողը դիմում է ներկայացնում ԵՊԼՀ ռեկտորին: Նոր տոմսը տրամադրվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒՅՎ

ԵՊԼՀ ընդունված յուրաքանչյուր սովորողի ուսումնառության սկզբում տրվում է ստուգման գրքույկ: Ստուգման գրքույկում նշվում են ուսուցման ձևը՝ առկա կամ հեռակա, կրթական աստիճանը, ֆակուլտետը, դասընթացների անվանումները, կրեդիտները, ՄՈԳ-ը, դասընթացի արդյունաբար գնահատականը՝ քննություն ընդունող դասախոսների և դեկանի ստորագրություններով հաստատված:

Ստուգման գրքույկում նշվում են նաև տեղեկություններ պրակտիկայի և ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ:

Այլ բուհ տեղափոխվելու կամ բուհից ազատվելու դեպքում ուսանողը պարտավոր է վերադարձնել ստուգման գրքույկը. փոխարենը տրվում է սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

ՀԱՄԱԿԱՐԳԶՍՅՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ԵՊԼՀ-ն կարևորում է համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսումնական գործընթացում:

ԵՊԼՀ-ում գործում է տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն, և առկա են համակարգչային տեխնիկայով հագեցած լսարաններ:

ԵՊԼՀ-ում ուսանողին դասավանդում են համակարգչային հմտություններ:

ԵՊԼՀ մասնաշենքերում հասանելի է անվճար անլար /WiFi/ ինտերնետ:

Համապատասխան բաժիններում հավաքվում են ուսանողների էլեկտրոնային հասցեները, որը հնարավորություն է տալիս բոլոր ուսանողներին տեղեկատվություն ուղարկել ԵՊԼՀ-ում իրականացվող միջոցառումների վերաբերյալ:

Խորհուրդ է տրվում հաճախակի այցելել ԵՊԼՀ պաշտոնական կայք /www.brusov.am/ և Facebook-յան պաշտոնական էջ /<https://www.facebook.com/YSLU.V.Brusov?fref=nf/>, որտեղ կարող եք ծանոթանալ համապատասխան նորություններին և ստանալ Ձեզ հետաքրքրող բազմաբնույթ հարցերի պատասխանները:

ՄԱՍ III
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԺԱՄԱՏԱԽՏԱԿ

I հերթ		II հերթ	
I-II ժամ	09:30-10:50	VII-VIII ժամ	14:00-15:20
III-IV ժամ	10:55-12:15	IX-X ժամ	15:40-17:00
V-VI ժամ	12:35-13:55	XI-XII ժամ	17:05-18:25

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Դասախոսությունը հոսքային պարապմունքի ձև է:

Դասախոսությունը գիտական-տեղեկատվական որևէ թեմայի վերաբերյալ դասախոսի կողմից տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն ուսանողին համապարփակ գիտելիքներ հաղորդելն է:

Դասախոսության ընթացքում նյութի իմաստավորման գործընթացն աշխատանքի պարտադիր բաղադրիչն է:

ՍԵՄԻՆԱՐ

Սեմինարը խմբային գործնական պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է ոչ միայն բանավոր շարադրել նյութը, այլև պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները:

Սեմինարի կարևորագույն բաղադրիչն ուսանողի ելույթն է համակուրսեցիների առջև: Փաստարկված պատասխանների արագ գտնումը, ուշադրության արագ կենտրոնացումը մի խնդրից մյուսի վրա զարգացնում են ուսանողի այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են նրան մասնագիտական հետագա գործունեության համար:

Սեմինար պարապմունքներին կարևոր է սեփական մտքերի լիարժեք շարադրումը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Գործնական են կոչվում այն պարապմունքները, որոնք անցկացվում են դասախոսի ղեկավարությամբ և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը:

Գործնական պարապմունքների ժամանակ ձևավորվում են ուսումնագիտական գրականության հետ աշխատելու, աղյուսակներ կազմելու և վիճակագրական տվյալներ վերլուծելու, տեքստի վերլուծության հմտություններ:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդատվությունը ուսումնական գործընթացի անքակտելի մասն է: Խորհրդատվության ժամանակ ուսանողները պարզաբանում են անհասկանալի հարցերը, դասախոսության բովանդակության կամ մեթոդիկայի, կուրսային կամ ավարտական աշխատանքների հետ կապված խնդիրները:

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

Ուսանողի ինքնուրույն հետազոտական աշխատանքի կարևորագույն մասն են կազմում կուրսային ու ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզը: Ուսումնառության ընթացքում դրանք նպաստում են ուսանողի ձեռք բերած գիտելիքների խորացմանը, ուսումնահետազոտական ունակությունների ձևավորմանը, ընդհանրացմանը և ամրապնդմանը, ինչպես նաև մասնագիտական անհրաժեշտ փորձի կուտակմանը: Հետազոտական աշխատանքներ կատարելիս զարգանում են ուսանողների՝ գիտական գրականության հետ աշխատելու ունակությունները և տեսական նյութը պրակտիկորեն կիրառելու հմտությունները:

Հետազոտական աշխատանքները հիմնականում կազմված են տեսական և գործնական մասերից: Ուսանողը կուրսային, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզը գրում է ղեկավարի օժանդակությամբ:

Հետազոտական աշխատանքները ունեն հստակ կառուցվածք և որոշակի ծավալ: Դրանք կատարելուց առաջ ամբիոնները ուսանողին ներկայացնում են հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջները:

Ավարտական քննությունները, ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացի վերջին փուլն են կազմում:

ՊՐԱԿՏԻԿԱ

Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով ուսումնական գործընթացի կարևորագույն մասն է կազմում մասնագիտական պրակտիկան /արտադրական, մանկավաժական, գիտաարտադրական, գիտամանկավարժական/, որի ընթացքում ուսանողները, ըստ մասնագիտական կողմնորոշման, այցելում են համապատասխան դպրոցներ, գերատեսչություններ, ինստիտուտներ, ձեռնարկություններ, կազմակերպություններ և այլ հիմնարկներ:

Ուսումնական պլաններով նախատեսվում են ուսումնաարտադրական և մանկավարժական պրակտիկաներ, որոնք պարտադիր են ուսանողների համար:

Պրակտիկայի հիմնական նպատակը ուսումնական գործընթացի ժամանակ ուսանողների կողմից ձեռք բերված տեսական գիտելիքների ամրապնդումն ու խորացումն է: Պրակտիկան ուսանողին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու կազմակերպության գործունեության մեթոդների հետ, որոշելու իր մասնագիտական հետաքրքրությունների ոլորտը, գնահատելու սեփական ուժեղ և թույլ կողմերը, միջանձնային շփման, աշխատանքային միջավայրում հարմարվելու, խնդիրներ որոշելու ու նրա լուծման ճանապարհների փնտրումն իրականացնելու ունակության տեսանկյունից:

Պրակտիկայի անցկացման ժամանակ ուսանողը պարտավոր է օրագիր պահել, որտեղ նա նշում է կատարված աշխատանքների բովանդակությունը: Օրագրի գրանցումները հսկվում են պրակտիկայի ղեկավարի կողմից:

Պրակտիկայի ավարտական փուլում ուսանողը կազմում է գրավոր հաշվետվություն և պրակտիկայի ղեկավարի կողմից ստորագրված օրագրի և գնահատականի հետ միասին հանձնում է ԵՊՀ պրակտիկայի ղեկավարին:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ

Միջանկյալ և ամփոփիչ ստուգումները ուսանողի կուրսակային գիտելիքի ստուգման ձևեր են, որոնք բխում են Բոլոնիայի գործընթացից, այն է՝ համաեվրոպական ECTS /կրեդիտների փոխանցման և կուրսակման

եվրոպական համակարգ/ կրեդիտային համակարգի սահմանումներից ու դրույթներից:

Յուրաքանչյուր կիսամյակում դասավանդվող առարկաներից սահմանված է 1 միջանկյալ /միջկիսամյակային/ և 1 ամփոփիչ ստուգում:

Միջանկյալ և ամփոփիչ ստուգումները, ինչպես նաև ակադեմիական պարտքերի մարումը իրականացվում է գրավոր և/կամ բանավոր կամ էլեկտրոնային թեստավորման եղանակով: Ամփոփման ձևի և բովանդակության ընտրությունը վերապահված է ամբիոնին և/կամ կենտրոնին, որը նախապես առարկայական նկարագրերում ամրագրում և համապատասխան ֆակուլտետի խորհրդի հաստատմանն է ներկայացնում դրանք:

Գրավոր թեստերի և բանավոր ամփոփումների հարցաշարերը համարվում են անվավեր, եթե դրանց վրա բացակայում է համապատասխան ֆակուլտետի դեկանատի կնիքը:

Բոլոր տեսական առարկաներից գրավոր և/կամ բանավոր ստուգումներն անհրաժեշտության դեպքում անցկացվում են ընթերականների ներկայությամբ:

Միջանկյալ ստուգման միջոցով վերահսկվում է ուսանողի կողմից ուսումնական առարկայի բովանդակության ընթացիկ յուրացումը: Այն անցկացվում է ուսումնական առարկայի յուրաքանչյուր մոդուլի ավարտին՝ նախորոշված ձևերին ու ժամանակացույցին համապատասխան: Կրթական /ուսումնական/ մոդուլը ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում:

Ուսանողների միջանկյալ ստուգման վերահանձման արդյունքում 60 միավորի շեմը չհաղթահարած ուսանողների գնահատականներն ամրագրելիս հիմք է ընդունվում առավելագույն նիշը:

Ամփոփիչ ստուգման միջոցով վերահսկվում է ուսանողի կողմից ուսումնական առարկայի բովանդակության ամբողջական յուրացումը: Այն անցկացվում է ուսումնական կիսամյակի վերջում՝ համաձայն կանխորոշված ձևերի և ժամանակացույցի, որոնք ամրագրված են ուսումնական առարկաների ծրագրերում: Միջանկյալ և ամփոփիչ ստուգումների վերջնական գնահատականը ձևավորվում է նաև ամենօրյա ընթացիկ ստուգումների գնահատականներից: Ամփոփիչ ստուգման արդյունքներն են վարկանիշային միավորը, տառային գնահատականը /A-F/ և որակավորման կրեդիտը: Ամփոփիչ ստուգման ժամանակ ուսանողների գիտելիքները գնահատվում են 100 միավորանոց սանդղակով: Ամփոփիչ ստուգման անցկացման բովանդակությունն ու ձևը որոշվում է նախապես, ինչի մասին ուսանողները պետք է տեղեկացվեն նախքան առարկայի փաստացի սկիզբը:

Վերահանձման շաբաթվա ընթացքում ուսանողները կարող են վերահանձնել առարկայական նյութի այն ծավալը, որի պատճառով միջկիսամյակային և ամփոփիչ ստուգումների ընթացքում չեն հաղթահարել դրական գնահատականի շեմը: Վերահանձման շաբաթվա ընթացքում ուսումնական պարապմունքները չեն ընդհատվում:

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Ուսումնական գործընթաց	Ժամանակացույց
Ուսումնական պարապմունքներ	16 շաբաթ
Միջանկյալ ստուգում	9-10-րդ շաբաթ
Վերահանձման շաբաթ	16-րդ շաբաթ
Ամփոփիչ ստուգում	17-18-րդ շաբաթ
Գնահատականների մուտքագրում և հայտարարում	19-20-րդ շաբաթ
1-ին և 2-րդ լուծարք	հաջորդ ուստարվա 3 ամբողջական շաբաթ

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ, ԹՎԱՅԻՆ ԵՎ ՏԱՌԱՅԻՆ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՆԴՂԱԿ**

Վարկանիշային գնահատական /ՎԳ/		Թվային գնահատական /ԹԳ/	Տառային գնահատական
առավելագույնը	նվազագույնը		
100	97	4.0	A
96.9	90	3.7	A
89.9	85	3.3	B
84.9	80	3.0	B
79.9	70	2.7	C
69.9	65	2.3	D
64.9	60	2.0	E
59.9	55	1.7	F _x
54.9	0	1.0	F

ՄԱՍ IV
ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարանի սովորողն իրավունք ունի՝

- ✓ սեփական հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջումների, ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձևը, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը.
- ✓ ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու դասախոսություններին, ինչպես նաև մասնակցելու համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին.
- ✓ մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևավորմանը /ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը/ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.
- ✓ մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և զնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը.
- ✓ հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական /գուգահեռ/ ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան.
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊԼՀ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին.
- ✓ օգտվելու համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնասիրտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից.
- ✓ միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում.
- ✓ բողոքարկելու համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով.

- ✓ օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի կողմից սահմանված կարգով ստանալու սահմանված չափի /ներառյալ անվանական/ կրթաթոշակ.
- ✓ ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և իրավական այլ փաստաթղթերին.
- ✓ լիազորված մարմնի սահմանված կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.
- ✓ ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ առնվազն յոթ շաբաթ տևողությամբ.
- ✓ սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները.
- ✓ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊԼՀ կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված իրավունքներից օգտվելու:

Համալսարանի սովորողները պարտավոր են՝

- ✓ սահմանված ժամկետներում կատարել ուսումնական առաջադրանքները,
- ✓ տիրապետել բարձր որակավորման ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին,
- ✓ պահպանել համալսարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները,
- ✓ հաճախել դասախոսություններին, սեմինարներին, գործնական, արտալսարանային պարապմունքներին,
- ✓ բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը:

**ԵՊԼՀ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

- ✓ ԵՊԼՀ-ում սովորողը պարտավոր է՝

ա/ կատարել կրթական ծրագրի պահանջները՝ հաճախել պարտադիր ուսումնական պարապմունքներին, կատարել ուսումնական պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները.

բ/ կատարել ՀՀ օրենսդրության, ԵՊԼՀ կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների բոլոր պահանջները.

գ/ ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում հանձնել միջանկյալ և ամփոփիչ ստուգումները.

դ/ հոգատարությամբ վերաբերվել ԵՊԼՀ գույքին.

ե/ բարձր պահել ԵՊԼՀ պատիվն ու հեղինակությունը.

զ/ լինել կարգապահ, ԵՊԼՀ բոլոր ուսումնական, ուսումնաարտադրական և այլ կառույցներում պահպանել մաքրություն:

- ✓ ԵՊԼՀ-ի գույքին պատճառված վնասի համար սովորողը կրում է նյութական պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
- ✓ Դասը սկսվելուց 10 րոպե հետո դասախոսի չներկայանալու դեպքում ուսանողները պարտավոր է այդ մասին տեղյակ պահել ֆակուլտետի ղեկանատին:
- ✓ Վճարովի հիմունքներով սովորողները պարտավոր են ժամանակին վճարել ուսման վարձը: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում այդ անձինք կարող են հեռացվել ԵՊԼՀ-ից:
- ✓ Հարգելի պատճառով պարապմունքներին չներկայանալու դեպքում սովորողը պարտավոր է եռօրյա ժամկետում այդ մասին տեղյակ պահել ֆակուլտետի ղեկանատին, իսկ ԵՊԼՀ ներկայանալու առաջին իսկ օրը ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր պարապմունքներին չմասնակցելու պատճառների մասին:
- ✓ Աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, շարունակական անբասիր աշխատանքի, աշխատանքում նորամուծությունների և այլ ձեռքբերումների, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար աշխատողների և սովորողների համար սահմանվում են հետևյալ խրախուսանքները՝

ա/ շնորհակալության հայտարարում /գրավոր կամ բանավոր/,

բ/ միանվագ դրամական պարգևատրում,

գ/ պատվոգրի հանձնում,

դ/ հուշանվերով պարգևատրում,

ե/ կարգապահական տույժի հանում,

զ/ վճարովի լրացուցիչ արձակուրդի տրամադրում:

- ✓ Այն սովորողները, որոնք ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ՀՀ օրենսդրության, ԵՊԼՀ կանոնադրության, ԵՊԼՀ ներքին իրավական ակտերի պահանջները, ԵՊԼՀ ներքին կարգապահական կանոնները, ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև ԵՊԼՀ-ից հեռացվելը:
- ✓ Սովորողի կողմից ՀՀ օրենսդրությամբ, ԵՊԼՀ կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների, ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կիրառելի են հետևյալ կարգապահական տույժերը՝
 - ա/ նկատողություն,
 - բ/ խիստ նկատողություն,
 - գ/ հեռացում համալսարանից:
 Կիրառված կարգապահական տույժի մասին տեղեկացվում է ԵՊԼՀ կոլեկտիվին:
- ✓ Մինչև կարգապահական տույժի կիրառումը սովորողից պետք է պահանջել գրավոր բացատրություն: Բացատրության բացակայությունը պետք է հաստատվի սովորողի կողմից այն ներկայացնելու հրաժարման համապատասխան ակտով:
- ✓ Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում՝ չհաշված սովորողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը:
- ✓ Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, սովորողը չի ենթարկվել կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված:
- ✓ Սովորողը կարող է հեռացվել /ազատվել/ ԵՊԼՀ-ից ՀՀ օրենսդրությամբ, ԵՊԼՀ կանոնադրությամբ և կանոնակարգերով նախատեսված դեպքերում:
- ✓ Չի թույլատրվում սովորողին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:
- ✓ Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին, բաղկացած է երկու կիսամյակներից և ավարտվում է՝ համաձայն ուսումնական պլանի:
- ✓ ԵՊԼՀ-ում սահմանվում են ուսումնական պարապմունքների հետևյալ տեսակները՝ դասախոսություն, գործնական, սեմինար ու լաբորատոր պարապմունքներ, խորհրդատվություն, մանկավարժական և արտադրական պրակտիկա, ստուգողական աշխատանքներ:

- ✓ Դասացուցակը հաստատվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից և դասերն սկսվելուց առնվազն 7 օր առաջ փակցվում է հաստատված տեղում:
- ✓ Լսարանային բոլոր տեսակի պարապմունքները 80 րոպե են: Որպես կանոն՝ մեկ պարապմունքը միավորում է 2 ակադեմիական ժամ: Պարապմունքների միջև դասամիջոցը 5-20 րոպե է:
- ✓ Ուսումնական պարապմունքների բնականոն ընթացքը չխաթարելու համար պարապմունքները սկսվելուց հետո բոլոր ուսումնական և նրանց կից մասնաշենքերում պետք է լինեն լռություն և կարգապահություն: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից:
- ✓ Ուսումնական պարապմունքների սկիզբը և ավարտը հաստատվում է ռեկտորի կողմից՝ ժամը 09:30-19:00-ի սահմաններում:
- ✓ ԵՊԼՀ մասնաշենքերում, դրանց հարակից տարածքներում արգելվում է ՀՀ օրենսդրությամբ հասարակական վայրերում արգելված գործողությունների իրականացումը:
- ✓ Ուսումնական լսարաններում դասընթացի ժամանակ արգելվում է բջջային հեռախոսների կամ ժամանակակից կապի այլ միջոցների օգտագործումը, եթե այն չի օգտագործվում որպես ուսումնական գործիք:
- ✓ Աշխատողների, սովորողների և այլ անձանց, ավտոտրանսպորտային միջոցների մուտքը ԵՊԼՀ տարածք, ինչպես նաև գույքի տեղաշարժը, դուրսբերումն ու ներկրումը սահմանվում են հատուկ սահմանված անցագրային ռեժիմով:
- ✓ ԵՊԼՀ աշխատողներին և սովորողներին արգելվում է տեղաշարժել գույքը ԵՊԼՀ տարածքում առանց վարչակազմի թույլտվության:
- ✓ Ոչ աշխատանքային և հանգստյան օրերին, ինչպես նաև արտակարգ պայմաններում ԵՊԼՀ-ում կարող է սահմանվել աշխատանքի հատուկ ռեժիմ:
- ✓ ԵՊԼՀ-ում սահմանվում են վարչակազմի ընդունելության օրեր և ժամեր, որի մասին ցուցատախտակ է փակցվում համապատասխան պաշտոնատար անձանց դռանը կից պատին:

**ԵՊԼՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ
ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) սահմանում է ԵՊԼՀ-ում ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են ՀՀ օրենքները «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ՀՀ կառավարության՝ 2006թ. հունիսի 27-ի թիվ 1183-Ն որոշումը, ԵՊԼՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:

3. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների վրա:

4. Սույն կանոնակարգի ընդունումը և նրանում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ:

**II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ
ՊԱՑՄԱՆՆԵՐԸ**

5. Ուսանողական նպաստը լրիվ կամ մասնակի փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ԵՊԼՀ ֆինանսական միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

6. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է հետևյալ ուսանողներին՝

6.1. ուսումնառության առկա համակարգում սովորող, մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանված ժամկետներում հանձնած /առանց լուծարքների/ քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ըստ մրցութային կարգի,

6.2. օրենքով նախատեսված սոցիալական հետևյալ խմբերում ընդգրկված անձանց՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն Հայաստանի Հանրապետության «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցողներին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի,

գ) զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի,

դ) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի,

ե) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդհանուր մրցույթից դուրս ընդունված ուսանողները՝ որպես նպատակային ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնություններից մինչև ուսումնառության ավարտը:

7. Սույն կանոնակարգի 6.1-րդ կետի համաձայն տրամադրվող ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից հրաժարվելու վերաբերյալ դիմումներն ընդունվում են մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը, և դրանց քննարկումը կազմակերպվում է սույն կանոնակարգի 10-րդ կետում նշված մանդատային հանձնաժողովի կողմից:

8. Սույն կանոնակարգի 6.1. ենթակետում նշված ուսանողների համար մրցույթը կազմակերպվում է մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 1-ը, նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի համար սահմանված ժամանակահատվածում հանձնած քննությունների և ստուգաքննների արդյունքների (ՄՈԳ-ի) հիման վրա: ՄՈԳ-ը հաշվարկվում է ԵՊԼՀ-ում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ (հարյուրերորդականի ճշտությամբ): Հավասար ցուցանիշների դեպքում միավորները հաշվարկվում են առանց կլորացման:

Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի՝ ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը:

9. Սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված ցուցակը ֆակուլտետի ղեկանի կողմից ներկայացվում է ԵՊԼՀ մանդատային հանձնաժողովի քննարկմանը:

10. ԵՊԼՀ մանդատային հանձնաժողովի կազմը հաստատվում է ԵՊԼՀ ռեկտորի հրամանով: Մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորները, ռեկտորի աշխատակազմի ղեկավարը, ուսումնական մասի վարիչը (հանձնաժողովի քարտուղար), ռեկտորի գլխավոր խորհրդականը, գլխավոր հաշվապահը, իրավաբանական բաժնի վարիչը, արհեստակցական կազմակերպության և ուսանողական խորհրդի նախագահները, ֆակուլտետների ղեկանները:

11. Մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, իրականացնում է մրցույթ և կազմում է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է մանդատային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ցուցակի կազմման համար ձևակերպվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը և մրցութային ցուցակը ստորագրվում են մանդատային հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

12. ԵՊԼՀ մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները մեկօրյա ժամկետում հրապարակվում են ֆակուլտետներում (վիակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակին): Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո համալսարանի մանդատային հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է ռեկտորին:

ԵՊԼՀ ռեկտորի հրամանով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո ուսանողների՝ այլ ուսումնական հաստատություն կամ այլ ֆակուլտետ փոխադրվելու, ինչպես նաև համալսարանից ազատվելու դեպքերում

ազատված ուսանողական նպաստներն այլ ուսանողների չեն տրամադրվում:

ԵՊԼՀ ռեկտորի հրամանում պարտադիր կարգով նշվում է ուսանողական նպաստի տրամադրման ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը:

13. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ազատված ուսանողական նպաստը նույն կուրսում տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստներին, որտեղ ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

14. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, ԵՊԼՀ այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ԵՊԼՀ (տվյալ մասնագիտությունում) առկա ուսուցման համակարգում մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:

15. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին:

16. Ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

17. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

18. Սույն կանոնակարգի 6.2. ենթակետի ա), գ) և ե) ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է 1-ին

կուրսից սկսած մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը:

19. Սույն կանոնակարգի 6.2. բ) և դ) ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է առաջին կուրսի սկզբում և վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

20. ԵՊԼՀ բակալավրի կրթական ծրագրով առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով: Հաջորդ կուրսերում վերոնշյալ ուսանողների ուսանողական նպաստը տրամադրվում է սույն կանոնակարգի 6.1. ենթակետում ամրագրված սկզբունքով:

21. ԵՊԼՀ-ն, Հայաստանի Հանրապետության՝ «Կրթության մասին» օրենքի համաձայն, բուհի վճարովի համակարգի ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում, իր միջոցների հաշվին ուսման վարձավճարն ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում է (մասնակի գեղջերի կիրառմամբ) հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց.

21.1. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին 30 տոկոսի չափով,

21.2. 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը 50 տոկոսի չափով,

21.3. 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին 50 տոկոսի չափով,

21.4. մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին 50 տոկոսի չափով,

21.5. երեք և ավելի անչափահաս, կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին 30 տոկոսի չափով,

21.6. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին 30 տոկոսի չափով,

21.7. մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված և պարտադիր ժամկետային ծառայություն անցած ուսանողներին 30 տոկոսի չափով,

21.8. սոցիալապես անապահով /ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների/ ուսանողներին 20 տոկոսի չափով,

21.9. բարձրագույն ուսումնական հաստատություններում վճարովի ուսուցման համակարգում երկու ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին 10 տոկոսի չափով

21.10. ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված մրցույթի արդյունքում գրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ 50 տոկոսի չափով,

21.11. ԵՊԼՀ-ում 5 և ավելի տարի հիմնական աշխատանքային պայմանագրով անընդմեջ աշխատող աշխատակիցների երեխաներին՝

ա) ԵՊԼՀ-ում 5-10 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում ուսանողական նպաստի չափը սահմանվում է բակալավրիատում 30 տոկոսի չափով, իսկ մագիստրատուրայում՝ 20 տոկոսի չափով,

բ) ԵՊԼՀ-ում 10 և ավելի տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում ուսանողական նպաստի չափը սահմանվում է բակալավրիատում 40 տոկոսի չափով, իսկ մագիստրատուրայում՝ 30 տոկոսի չափով,

21.12. հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին՝ 10 տոկոսի չափով,

21.13. ԵՊԼՀ մանդատային հանձնաժողովի որոշմամբ՝ առանձնահատուկ դեպքերում այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ 10-30 տոկոսի չափով:

22. Սույն կանոնակարգի 21.9, 21.10, 21.11, 21.12, 21.13 կետերը հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների վրա չեն տարածվում:

23. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող ուսանողների համար կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափ նախատեսող դրույթը:

24. Նախորդ քննաշրջանի արդյունքում բակալավրի և մագիստրոսի համար սահմանված միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ շեմը չհաղթահարած ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:

25. Բակալավրիատում միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ միջին շեմը 3.0-ն է, իսկ մագիստրատուրայում՝ 3.3-ը:

26. Սույն կանոնակարգի 21-րդ կետի համաձայն՝ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն հանձնվում են ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

27. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի վատթարացման, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու դեպքում) ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատման վերաբերյալ հրամանում:

28. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, ԵՊԼՀ այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել առկա կամ հեռակա ուսումնառության համակարգում մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:

29. Բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության 2-րդ կիսամյակից:

30. ԵՊԼՀ մանդատային հանձնաժողովի կողմից ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողների հաստատված ցուցակները մեկօրյա ժամկետում հրապարակվում են ֆակուլտետներում (փակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակին): Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները աշխատանքային երեք օրվա ընթացքում պետք է ներկայացվեն մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո համալսարանի մանդատային հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողների ցուցակները և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է ռեկտորին:

III. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏՎԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

31. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական օժանդակություն է գերազանց և լավ առաջադիմություն ցուցաբերած, հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած, առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողներին՝ ֆինանսական խրախուսանքի ձևով:

32. Ուսանողների հասարակական ակտիվ դիրքորոշումը բնութագրվում է ստորև նշվող ցուցանիշներով՝

ա) մասնակցություն ֆակուլտետի և համալսարանի ուսանողական հասարակական աշխատանքներին,

բ) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),

գ) մասնակցություն միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

դ) ֆակուլտետի կամ համալսարանի ղեկավարության մեկանգամյա կամ բազմակի հանձնարարականների բարեխղճորեն և ժամանակին կատարում, որոնք ունեն համապատասխան ձևակերպում:

33. Ուսանողների մասնակցությունը հասարակական աշխատանքներին հաստատվում և մանդատային հանձնաժողովին է ներկայացվում ԵՊԼՀ ՌԻԽ նախագահի կողմից:

34. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից համալսարանի ներքին կարգապահության կանոնների խստիվ պահպանմամբ, և նշված կանոնների խախտման դեպքում ռեկտորի, պրոռեկտորի կամ ֆակուլտետի ղեկանի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են հանդիսանում պետական կրթաթոշակ չհատկացնելու համար:

35. ԵՊԼՀ առկա ուսուցման համակարգում սովորող 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամության կարգ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին, ինչպես նաև զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:

Առանց ծնողական խնամքի մնացած և ԵՊԼՀ-ում առկա ուսումնառության համակարգում սովորողներին վճարվում է կրթաթոշակ համալսարանում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

36. ԵՊԼՀ պետական կրթաթոշակների թվաքանակը և չափը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության՝ տվյալ տարվա պետական բյուջեով համալսարանին հատկացված միջոցների սահմաններում:

37. Մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, իրականացնում է մրցույթ և կազմում է ուսման պետական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է մանդատային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ցուցակի կազմման համար ձևակերպվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ պարտադիր կարգով գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը և մրցութային ցուցակը ստորագրվում են մանդատային հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

38. ԵՊԼՀ մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները մեկօրյա ժամկետում հրապարակվում են ֆակուլտետներում (փակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակին): Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո համալսարանի մանդատային հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է պետական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է ռեկտորին:

39. Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին սույն կանոնակարգի 31-34-րդ կետերում նշված պայմանների պահպանման պարագայում պետական կրթաթոշակի հատկացումը վերահաստատվում է: Թվարկված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից:

40. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են տվյալ մասնագիտության առկա ուսումնառության համակարգում սովորող այլ ուսանողների:

41. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի վատթարացման, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու պատճառով) ուսումնառությունն ընդհատած ուսանողի համար վերականգնվելիս պահպանվում է նախկինում նրա ունեցած պետական կրթաթոշակ ստանալու իրավունքը:

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում:

42. ԵՊԼՀ-ն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու ներբուհական, այդ թվում՝ անվանական կրթաթոշակներ:

43. ԵՊԼՀ անվանական կրթաթոշակ նշանակվում է բակալավրիատի և մագիստրատուրայի առավել աչքի ընկնող, վերջին 4 կիսամյակներում անընդմեջ բարձր (ՄՈԳ-ը 3.7-ից բարձր) առաջադիմություն (մագիստրատուրայի ուսանողների դեպքում հաշվի են առնվում վերջին 2 կիսամյակի արդյունքները) և գիտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած, առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողներին:

44. Ուսանողների հասարակական ակտիվությունը հաստատվում է ԵՊԼՀ ՈԻԽ նախագահի կողմից:

45. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունները քննարկում են ֆակուլտետների խորհուրդները, որի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն են ներկայացնում ԵՊԼՀ ուսանողության, երիտասարդության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին, որի կողմից էլ անվանական կրթաթոշակների հավակնորդների ցուցակը ներկայացվում է ԵՊԼՀ գիտական խորհրդի հաստատմանը: ԵՊԼՀ գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է անվանական կրթաթոշակները, որի հիման վրա ԵՊԼՀ ռեկտորը տալիս է համապատասխան հրաման: Անվանական կրթաթոշակից զրկելը կատարվում է նույն ընթացակարգով:

46. Անվանական կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:

47. Ուսանողը զրկվում է նշանակված անվանական կրթաթոշակից, եթե ուսումնական կիսամյակի ավարտին չի համապատասխանում սույն կանոնակարգի 43-րդ կետով սահմանված չափանիշներին:

**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Ուսանողի ուղեցույց

Տեխ. Խմբագիր՝ **Ս.Առաքելյան**
Ձևավորող՝ **Հ.Էլչակյան**
Համ. էջադրող՝ **Հ.Էլչակյան**

Ստորագրված է տպագրության 01.03.2016:
Չափս 70x100 1/16: Տպ. 4 մամուլ
Տպաքանակ 1000
Տպագրված է



ՀՀ, ք.Երևան, 0002, Թումանյան 42
Հեռ.՝ (37410) 530-552
Ֆաքս՝ (37410) 585-554
Էլ.փոստ՝ info@yslu.am
Կայք՝ <http://brusov.am>